ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

**05.11.2019թ.**

Նիստին մասնակցում էին՝ Ս. Գապոյանը, Ա. Հովեյանը,
Վ. Հակոբյանը, Ա. Մարուխյանը, Մ. Մարինոսյանը, Ս. Ամիրխանյանը, Վ. Ավետիսյանը,
Ա. Ջանգեզուրյանը
Նիստը վարող՝ Գավառի համայնքապետ Գ. Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կողմից Գավառի համայնքապետարանում իրականացված վարչական հսկողության արդյունքների քննարկման մասին:

   /զեկ. Գ. Բոշյան/
3. Գավառ համայնքի կամավոր խնդիրները և սոցիալական աջակցության չափորոշիչները սահմանելու, կամավոր խնդիրների լուծման նպատակով Գավառ համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը սահմանելու մասին:

   /զեկ. Կ. Մանուկյան/
4. Գավառ համայնքի 2019 թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

   /զեկ. Տ. Բրսիկյան/
5. Դրամական օգնություն տրամադրելու մասին:

   /զեկ. Վ. Խաչատրյան/
6. Սեփականության իրավունքով Գավառ համայնքին պատկանող Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց թիվ 8 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 24 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին:

   /զեկ. Ա. Գևորգյան/
7. Սեփականության իրավունքով Գավառ համայնքին պատկանող Գավառ քաղաքի Ազատության փողոց թիվ 19 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 18 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին:

   /զեկ. Ա. Գևորգյան/
8. Համայնքային սեփականություն հանդիսացող «Գավառ թիվ 3 մանկապարտեզ», «Գավառ թիվ 4 մանկապարտեզ», «Գավառ թիվ 5 մանկապարտեզ», «Գավառ թիվ 7 մանկապարտեզ», «Գավառ թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների շենքերը մանկապարտեզներին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

   /զեկ. Ա. Բաղալյան/
9. Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման կարգը հաստատելու մասին:

   /զեկ. Ա. Բաղալյան/

10. Գավառ համայնքում համայնքային նշանակության փողոցների անվանումներ հաստատելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և ավտոտնակը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և ավտոտնակը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

15. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին

/զեկ. Ա. Բաղալյան/

16. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ սուբյեկտի ուղղում կատարելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

18. Գավառ համայնքին անհատույց հատկացված ոլոռի, սիսեռի, հնդկացորենի սերմացուները սոցիալապես անապահով բնակիչներին բաժանելու մասին:

/զեկ. Մ. Մանուկյան/

19. Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի վրա գտնվող 1 չորացած ծառը կտրելու, իսկ մյուսը տեղափոխելու մասին::

/զեկ. Յու. Մինասյան/

ՀԱՐՑ 1.

ՈՐՈՇՈՒՄ 103. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի ավագանին միաձայն քվեարկությամբ որոշում է հաստատել նիստի օրակարգը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 2.

ՈՐՈՇՈՒՄ 104. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1. մասի 37)-րդ հոդվածով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից Գավառի համայնքապետարանում իրականացված վարչական հսկողության արդյունքներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տանել համապատասխան աշխատանքներ:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 3.

ՈՐՈՇՈՒՄ 105. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ և ՍՈՑԻԱԼԱԿՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Գապոյանը, Ա. Ջանգեզուրյանը

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել
   1) Գավառ համայնքի կամավոր խնդիրները՝ համաձայն հավելված 1-ի
   2) Սոցիալական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Հաստատել կամավոր խնդիրների լուծման նպատակով Գավառ համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելված 3-ի
3. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կամավոր խնդիրները Գավառի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորություններն են և դրանց լուծումը ապահովում է Գավառ համայնքի ղեկավարը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

4. Գավառ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կազմում ավագանին որոշեց Գավառ համայնքի ավագանու կազմից ընդգրկել 2թեկնածուների՝ Արման Մարուխյանին և Վահե Հակոբյանին:

Կողմ՝ (6) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (2)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 106. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում Գավառ համայնքի ղեկավարին լիազորությունների պատվիրակման ,,25,, մարտի 2019 թվականին կնքված N 18 պայմանագիրը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի 2019 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 1) Գավառ համայնքի 2019 թ. բյուջեի եկամտային մասում պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ տողը ավելացնել 458 700 /չորս հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամով

2) Ծախսային մասը՝ 01 բաժնի 3 խմբի 3 դասի /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ գործառնական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 458 700 /չորս հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամով:

2. 1) 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական դաստիարակություն/ գործառնական դասակարգման 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 3 878 000 /երեք միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար/ ՀՀ դրամով,

2) 08 բաժնի 6 խմբի 1 դասի /հանգիստ, մշակույթ և կրոն/ գործառնական դասակարգման 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1882000 /մեկ միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար/ ՀՀ դրամով:

3. Պակասեցված ընդամենը 5760000 /հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել.

1) 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 2350000 /երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Բունիաթյան փողոցի կապիտալ վերանորոգման, Զ. Անդրանիկի 1-ին փողոցի ճաղավանդակների կապիտալ վերանորոգման և Ազատության փ. 2-րդ փակուղում գտնվող հենապատի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

2) 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ ,,Գավառի Մշակույթի տուն,, ՀՈԱԿ-ի շենքի մի հատվածի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

3) 08 բաժնի 2 խմբի 7 դասի /հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ Արծրունի Եղբայրների հուշարձան համալիրի պատվանդանի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

4) 08 բաժնի 6 խմբի 1 դասի /հանգիստ մշակույթ և կրոն/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ Գետեոն Միքայելյան և Կարեյան փողոցներում խաղահրապարակների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

5) 06 բաժնի 4 խմբի 1 դասի /փողոցների լուսավորում/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ Գավառ համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար /Կարեյան փողոց, Բարեկամության փողոց, Ղամարյան Եղբայրների փողոցի մի հատված, Ազատության 2 փ. 2 փկղ. մի հատված և Զարգարյան 1 փ. մի հատված/:

6) 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական դասակարգման 5132 /համակարգչային ծրագրեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 1710000 /մեկ միլիոն յոթ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ Գավառ համայնքի համայնքային ՝ոչ առևտրային կազմակերպություններին Հանրային հատվածի հաշվապահական ծրագրի ձեռք բերման համար, իսկ 5122 /վարչական սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ Ազատության 13 շենքի բակում կառուցված խաղահրապարակին գույք ձեռք բերելու համար:

01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական դասակարգման 4241 /մասնագիտական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամով, որն ավելացնել նույն գործառնական դասակարգման 4823 /պարտադիր վճարներ/ տնտեսագիտական հոդվածին:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 5.

ՈՐՈՇՈՒՄ 107. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Գապոյանը և առաջարկեց դրամական օգնության չափը սահմանել 101 000 /մեկ հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ և 13-րդ հոդվածի 10-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 21.08.2017թ. թիվ 5 նիստի թիվ 36 որոշման 4-րդ մասի պահանջները, 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ համայնքի Արծրունի Եղբայրներ փողոց թիվ 10 հասցեի բնակիչ Աննա Զաքարյանին տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն՝ ամուսնու, առաջին կարգի հաշմանդամ Սարգիս Միրիբյանի հրատապ բուժման ծախսերը մասնակի վճարելու նպատակով:
2. Գավառ համայնքի Հացառատ թաղամասի բնակիչ՝ 101 ամյա Թագուշ Իսպիրյանին տրամադրել 101000 /մեկ հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 6.

ՈՐՈՇՈՒՄ 108. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի և 18-րդ հոդվածի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 67 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 1 հասցեի բնակիչ Վարդան Հրաչիկի Սաֆոյանի՝ ժամանակին իրեն հատկացված բնակարանը սեփականացնելու մասին Գավառի համայնքապետին հասցեագրված դիմումը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Ազատության 2-րդ փողոց թիվ 8 բազմաբնակարան շենքի թիվ 24 /նախկին հասցեն՝ քաղաք Գավառ Ազատության փողոց թիվ 67 բազմաբնկարան բնակելի շենքի թիվ 1/ հասցեում գտնվող 46.93ք.մ. մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել Վարդան Հրաչիկի Սաֆոյանին՝ նրա հետ կնքելով նշված հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 7.

ՈՐՈՇՈՒՄ 109. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 18 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի և 18-րդ հոդվածի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 19 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 18 հասցեի բնակիչ Սմբատ Հարությունի Գասպարյանի՝ ժամանակին իրեն հատկացված բնակարանը սեփականացնելու մասին Գավառի համայնքապետին հասցեագրված դիմումը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 19 բազմաբնակարան շենքի թիվ 18 /նախկին հասցեն՝ քաղաք Գավառ Ազատության փողոց թիվ 8 բազմաբնակարան շենքի թիվ 5/ հասցեում գտնվող 24.78ք.մ. մակերեսով բնակարանը

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 9.

ՈՐՈՇՈՒՄ 111. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ա. Զանգեզուրյանը

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1. մասի 42 կետով և 42-րդ հոդվածի 1. մասի 17 կետով, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Գավառ համայնքում հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման կարգը՝ համաձայն հավելվածների.
   1) Գավառ համայնքի գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման կարգը՝ համաձայն հավելված N1-ի
   2) Գավառ համայնքի գեզեմանի վկայականի ձևը՝ համաձայն հավելված N2-ի
   3) Գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոնների կարգը՝ համաձայն հավելված N3-ի
   4) Գավառ համայնքի գերեզմանատներում վճարովի հիմունքներով հողատարածքի հատկացման կարգը՝ համաձայն հավելված N4-ի
   5) վերահուղարկման կարգը՝ համաձայն հավելված N5-ի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 10.

ՈՐՈՇՈՒՄ 112. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 22) կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Գավառ համայնքի փողոցների անվանումները՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ` (8) Դեմ `(0) Ձեռնպահ` (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 11.

ՈՐՈՇՈՒՄ 113. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց թիվ 30/5 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0451- կադաստրային ծածկագրով 0.06հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գործառնական նշանակության հողատարածքն, սպանդանոց կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0451- կադաստրային ծածկագրով 0.06հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ` (8) Դեմ `(0) Ձեռնպահ` (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 12.

ՈՐՈՇՈՒՄ 114. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ և ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետերի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Բոշնաղյան փողոց 1-ին փակուղի թիվ 3 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0384-0050 կադաստրային ծածկագրով 0,003հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, սահմանափակումներ չունեցող հողատարածքն և Արսեն Խաչիկի Ռուբինյանի կողմից կառուցված 30,00ք.մ. արտաքին 25,82ք.մ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով ինքնակամ կառույցն իրականացրած անձին օտարելուն:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ, ավտոտնակի 1ք.մ.-ի համար՝ 1300 /մեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 13.

ՈՐՈՇՈՒՄ 115. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ և ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետերի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Կաբելագործների փողոց թիվ 16 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0447-0158 կադաստրային ծածկագրով 0,0054հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության, սահմանափակումներ չունեցող հողատարածքն և Անահիտ Հենրիկի Սաղաթելյանի կողմից կառուցված 54,00ք.մ. արտաքին /48,87ք.մ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով ինքնակամ կառույցն իրականացրած անձին օտարելուն:

2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ, ավտոտնակի 1ք.մ.-ի համար՝ 1300 /մեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 14.

ՈՐՈՇՈՒՄ 116. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Բունիաթյան փողոց թիվ 25/10 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-3060- կադաստրային ծածկագրով 0.00102հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքն, առևտրի կետ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-3060- կադաստրային ծածկագրով 0.00102հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 15.

ՈՐՈՇՈՒՄ 117. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Գապոյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 13) կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Բարեկամության 2-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 10 հասցեում գտնվող., Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0450-0085 կադաստրային ծածկագրով, 0.1հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքն, բնակելի տուն կառուցելու նպատակով, 5 տարի ժամկետով վարձակալական հիմունքներով տրամադրելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 16.

ՈՐՈՇՈՒՄ 118. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Նկատի ունենալով, որ Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 17 բազմաբնակարան բնակելի շենքից հյուսիս ընկած հատվածում 22.8ք.մ. մակերեսով հողամասը գտնվում է համայնքի վարչական սահմաններում և պատկանում է Գավառ համայնքին, համաձայնություն տալ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թ. Ն186-Ն հրամանի պահանջների համապատասխան կատարել սուբյեկտի ուղղում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ` (8) Դեմ `(0) Ձեռնպահ` (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 17.

ՈՐՈՇՈՒՄ 119. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 120/1 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0377- կադաստրային ծածկագրով 0.00217հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքն, առևտրի կետ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0377- կադաստրային ծածկագրով 0.00217հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ` (8) Դեմ `(0) Ձեռնպահ` (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 18.

ՈՐՈՇՈՒՄ 120. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՈԼՈՌԻ, ՍԻՍԵՌԻ, ՀՆԴԿԱՑՈՐԵՆԻ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 360-Լ որոշման պահանջով և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կարգադրությամբ, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ համայնքին անհատույց հատկացված 400կգ ոլոռի, 1000կգ սիսեռի և 600կգ հնդկացորենի սերմացուները բաժանել համայնքի սոցիալական անապահով ընտանիքներին:
2. Հատկացված յուրաքանչյուր կիլոգրամ սերմի դիմաց 2020 թվականի բերքահավաքից հետո ետ վերցնել նույնքան սերմ՝ համայնքի այլ բնակչի հատկացնելու համար:
3. Սերմերի ներկրումը կատարվել է համայնքի միջոցների հաշվին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքից:

ՀԱՐՑ 19.

ՈՐՈՇՈՒՄ 121. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 1 ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԸ ԿՏՐԵԼՈՒ, ԻՍԿ ՄՅՈՒՍԸ՝ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ա. Մարուխյանը, Ս. Գապոյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 18 հոդվածի 1. մասի 20) կետով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի վրա գտնվող ամբողջովին չորացած 1 ծառը կտրել, իսկ մյուս ծառը տեղափոխել այլ վայր:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնպահ՝ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ